


# ԱՍՏՎԱԾԱՇՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

## ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ ԵՍԱՅԵԱՅ

Իսկ այս ո՞վ է որ դիմեալ գայ յԵդովմայ, կարմրութիւն ձորձոց իւրոց ի Բոսորայ, գեղեցիկ պատմուճանաւ և բուռն զօրութեամբ: Ես խօսիմ զարդարութիւն և իրաւունս փրկութեան:

Վասն է՞ր կարմիր են ձորձք քո, և հանդերձք իբրև հնձանահարի, լիոյ հնձանի կոխելոյ:

Հնձան հարի միայն, և ի հեթանոսաց ոչ ոք էր ընդ իս. կոխեցի զնոսա սրտմտութեամբ և ճմլեցի զնոսա բարկութեամբ և իջուցի յերկիր, և զամենայն հանդերձս իմ թաթաւեցի. Զի հասեալ էր ի վերայ նոցա օր հատուցման, և ամ փրկութեան, եկեալ հասեալ: Եւ հայեցայ՝ և ոչ ոք էր որ օգնէր, զմտաւ ածի, և ոչ ոք էր որ ի թիկունս հասանէր. փրկեաց զնոսա բազուկ իմ, և սրտմտութիւն իմ միայն զդէմ կալաւ. Կոխեցի զնոսա բարկութեամբ իմով, և իջուցի զնոսա յերկիր:

(ԳԼՈՒԽ ԿԳ, 1—6)

## ՍԱՂՄՈՍ

Համբարձաւ Աստուած օրհնութեամբ, և Տէր մեր ձայնիւ փողոյ:

Ծափս հարէք, ամենայն հեթանոսք, աղաղակեցէք առ Աստուած ի ձայն ցնծութեան: Տէր բարձրեալ և ահարկու, Թագաւոր մեծ ի վերայ ամենայն երկրի: Հնազանդ արար զժողովուրդս ընդ մեզ, և զհեթանոսս ի ներքոյ ոտից մերոց: Ընտրեաց զմեզ իւր ի ժառանգութիւն, գեղեցկութեանցն Յակոբայ զոր և սիրեաց: Համբարձաւ Աստուած օրհնութեամբ և Տէր մեր ձայնիւ փողոյ: Սաղմոս ասացէք Աստուծոյ մերում, սաղմոս ասացէք Թագաւորին մերում, սաղմոս ասացէք: Թագաւոր մեծ ի վերայ ամենայն երկրի Աստուած է, սաղմոս ասացէք նմա իմաստութեամբ: Թագաւորեաց Աստուած ի վերայ հեթանոսաց, Աստուած նստաւ յաթոռ սրբութեան իւրոյ: Իշխանք ժողովրդոց ժողովեցան առ Աստուած Աբրահամու, զի Աստուծոյ զօրութիւնք յերկրէ յոյժ համբարձան:

(ՍԱՂՄՈՍ ԽԶ (ԽԷ), 2—10)

